յանձանձել, պահել և հաստատել ի հաւատս Առաքելական Եկեղեցւոյն Հայաստանեայց, որոյ հիմն Թադէոս և Բարդուղիմէոս եդին և զողջ շինուածն ած ի կատար հրաշալի նահատակութեամբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն։

Գիտէք իսկ և հուչակեցաւ, թէ յաւուր հանդիսի օծման մերում առաջի իջման սուրբ Տաճարին՝ ուխտեցի հաւատարիմ մնալ առ այդ հիմն և շինուածն Առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց և պինդ պահել զաւանդութիւնս մեր նախնի սուրբ հարց, զգուշանալ չխրամատել զցանկն հայրենի։

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ, յԱռաքելոց և ի սրբազան Հայրապետաց։

Ուստի կայ և մնայ մեզ ամենեցուն երկիւղածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեք իւրաքանչիւր զմեծ պատասխանատուութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ տուեալք են ի Հոգւոյն պաշտել զեկեղեցին, հոգալ վասն եկեղեցւոյն և թէ յաշխարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի Խաչ՝ յօժարութեամբ կրել և երթալ զհետ Զօրագլխոյն, որ ասաց. «որ ոչ առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ չէ ինձ արժանի»։ Շնորհ մեծ է մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ։

Աղօթեցէք վասն իմ, ո՛վ գորշակից հոգեւոր իմ եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եդ ի վերայ թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեայց։ Այլ թէ դուք զօրավիգ լինիջիք ինձ, որպիսեօք Սիմէօն Կիւրենացին, ես յայնժամ զօրացեալ ի Հոգւոյն՝ բարձեալ զխաչն սիրով ածեմ ի կատար Գողգոթային։

Եւ ես աղօթեմ վասն Ձեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խուսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. «յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք»։

Եւ զինչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նահատակ նախնեաց։

Իսկ դու Եկեղեցի և ժողովուրդ Հայոց, որ ընտրեցիք զիս հովիւ Ձեզ, ես ապաստան լինիմ աղօթից ձերոց և հաւատամ թէ՝